

անծանօթէն: Բայց այդ զգայնութիւնները անպէտ բաներ էին գիւղացիին համար, որ իբրեւ թշնամի կը վարէր ճահիճին հետ, անիծելով, հայհոյելով: Միւս կողմէն, ըսի անգամ մը, մէկ տարի ցանք մը բաւ էր այդ եօթը տարուան զրկանքը լայնօրէն դիմաւորելու: Նման տարի մը ես չտեսայ այդ արտերուն համար: Բայց գեղացիներուն վկայութիւնը քնարական գեղեցկութեան կը բարձրանար, գովելու մէջ առատութիւնը, պէրէֆէքը: Մանգաղը կը հալէր ու հասկը կը դիմանար: Առատութիւնը գեղացին կ'ընէ զուարթ, հաճոյապաշտ: Բայց կեանքին բարեկենդաններն են այդ բացառիկ շրջանները: Ճահիճին չարիքը միայն հողով չէր, որ կ'իշխէր հոն, այլեւ հովով, որ ո'չ միայն թանձր ու գորշ փտութեան միագման վեր, գիւղ կը փոխադրէր, այլեւ կարծես կը վարէր բանակները մօեղներուն, առտուն, արշալոյսէն առաջ, ու իրիկունը՝ վերջալոյսէն ետք, խոլժող սպառնա-գին, շունչէդ մտներով բերանդ ու պղպեղի քսածի պէս այրելով-եփելով մարմինիդ բաց մասերը: Բնական չարիքէն շատ աւելի անողոք, որովհետեւ աւելի խելացի, կար պետական չարիքը: Քրիստոնեայէն գրաւուած երկիրներու իսլամ ժողովուրդը թուրքիա փոխադրելու ծրագիրը քանի մը նպատակներ կը հետապնդէր նոյն ատեն: Ատոնցմէ մէկը՝ հայերու հողերուն վրայ գետեղելն էր իսլամ գաղթականներ: Առանց մէկուն հարցնելու, կառավարութիւնը առտու մը տնկած կ'ըլլար գեղի մը հողերուն վրայ, երբեմն ռազմագիտական կէտերու, երբեմն գեղը կտտելու դիտումներով: Յիսնեակ մը վրան, առժամեայ մը, որ քանի մը ամիս վերջ կը փոխուէր խսիրով ու թրիքով ու ոգորիի ճիւղերով հիւղակի մը: Բորոտ այծերը կը ճլտորէին: Էշուկը կ'ըլլար գոմշուկ: Գեղը ծրագրող յատակագիծին կեդրոնը՝ աղբիւրը, դարաւոր սօսին կամ ջաղացք մը կը դառնար աղօթատեղի: Ու տարի մը ետք՝ երէկ հայուն պատկանող այդ հողամասին վրայ կը տեղաւորուէր գաղթական գիւղակը: Ժամանակը պիտի տանի